

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՒՐԳԵՆ ԽՈՒԴՈՅԱՆ
ՍԱՀԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՏԴ 004.92

ԳՄԴ 73

Խ 963

Հաստատված է ՀՀ ԿԳ նախարարի՝

24.10.2014թ. թիվ 1045-Ա/Ք հրամանով

ԳՈՒՐԳԵՆ ԽՈՒՂՈՑԱՆ

ՍԱՀԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

Խ 963

Գ. Խուդոյան

Գրաֆիկական պատկերների ընթերցում /Գ. Խուդոյան,
Ս. Հովսեփյան, Ս. Արշակյան.-Եր.: Կրթության ազգային
ինստիտուտ, 2014, 240 էջ:

ՀՏԴ 004.92

ԳՄԴ 73

ISBN 978-9939-806-94-5

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2014

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ուսուցման գործընթացի կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների ինքնուրույն ճանաչողական և ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Անհերքելի է գիտելիքների, մտավոր կարողությունների դերը մարդկանց աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման գործում: Սակայն սովորողները դժվարանում են կողմնորոշվել գործնականում, երբ անհրաժեշտ է գիտելիքները կիրառել կոնկրետ, ոչ ստանդարտ իրավիճակում: Այդպիսի սովորողներին ակադեմիկոս Դ. Ի. Բլոխինցը իրավացիորեն բնութագրում է «լցոնած ձկներ» արտահայտությամբ, որոնց պարունակությունը խանգարում է նրանց շարժունակությանը, և նրանք կորցնում են «լողալու» ունակությունը: Խոսքն այստեղ վերաբերում է սովորողի գիտելիքների շարժունակության, մտքի ճկունության, ակտիվության, ինքնուրույնության բացակայությանը, գիտելիքները գործնականում կիրառելու անկարողությանը:

Այդ խոշոր թերության պատճառն այն է, որ ուսուցման գործընթացում գերիշխում է սովորողների վերարտադրողական գործունեությունը:

Սովորողը մեծ մասամբ գիտելիքներ ստանում է պատրաստի վիճակում, սերտում է դրանք առանց սեփական մտքի լարված, որոնողական գործունեության: Դրանով հիմնականում ավարտվում է ուսուցման գործընթացի «մուտքն» ու «ելքը»:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը էապես պայմանավորված է դասավանդման մեթոդիկայով: Անհրաժեշտ է ուսումնական գործընթաց ներդնել այնպիսի մեթոդներ, հնարներ, միջոցներ, որոնք խթանեն սովորողի ինքնուրույն և ստեղծագործական ունակությունների զարգացումը, դասը դարձնեն առավել հետաքրքիր:

Գծագրությունն իր ծրագրային բովանդակությամբ և ուսուցման մեթոդիկայով զգալիորեն տարբերվում է հարակից դասընթացներից:

Գծագրության դասերի շարքում գերիշխում են գործնական պարապմունքները: Տեսական գիտելիքները մատուցվում են ակնարկային դասախոսություններով:

Կարճատև ակնարկային դասախոսությունը զուգակցվում է տեսական նյութի վերաբերյալ ֆրոնտալ գործնական պարապմունքով, և ուսուցիչը ցուցադրում է տվյալ գիտելիքի գործնական կիրառության օրինակներ:

Գծագրության դասերի մեծ մասը զուտ գործնական բնույթ ունի: Գործնական պարապմունքները, բացի տեսական գիտելիքների ամրակայումից, նպատակ ունեն ձևավորել և զարգացնել սովորողների ստեղծագործական, տրամաբանական և տարածական մտածողությունը: Ինքնուրույն վերափոխիչ և ստեղծագործական գործունեության հիմքը կազմում են տարածական պատկերացումները և երևակայությունը:

Սովորողների տարածական պատկերացումների և երևակայության ձևավորումն ու զարգացումը գծագրության ուսուցչի աշխատանքի ամենակարևոր և ամենաբարդ բնագավառն է:

Գծագրության յուրաքանչյուր դաս պետք է պարունակի սովորողների տարածական պատկերացումները և երևակայությունը զարգացնող նախապատրաստված պահեր:

Հաճախ գծագրության ուսուցիչները նույնացնում են տարածական պատկերացում և երևակայություն հասկացությունները, դրանց վերագրելով տրված պրոյեկցիաներով առարկայի կառուցվածքը /կոնստրուկցիան/ ընկալելու ունակություն: Սակայն իրականում այդպես չէ:

Տարածական պատկերացումները տարածության ձևերի ծավալային, տարածական հատկանիշների մտապատկերներն են, որոնք առաջանում են առարկաների անմիջական ընկալմամբ և պահպանվում են գիտակցության մեջ գլխուղեղի հիշողության ֆունկցիայի շնորհիվ: Այսպես, առօրյալում սովորողը տեսնում, շոշափում, զննում է զանազան առարկաներ, որոնք ունեն երկրաչափական մարմինների կամ դրանց համախմբի ձև: Նրա մոտ զգայություններով և մտածողությամբ առաջանում են պատկերացումներ առարկայի գույնի, նյութի, և տարածական պատկերացումներ ձևի, չափերի, դիրքի մասին: Օրինակ խողովակներ դիտելիս և զննելիս երեխան պատկերացում է կազմում դրանց երկարության, տրամագծի, նյութի մասին, ընկալում է խողովակի կորությունը, սահունությունը, համասեռությունը, հիմքերի շրջանաձևությունը, դիրքը տեղանքում:

Ուսուցման գործընթացում սովորողը հանդիպում է իր տարածական պատկերացումներին համանման գրաֆիկական պատկերների՝ զլաննե-

րի նկարների, մոդելների: Երբ սովորողը բերում է գլանի օրինակներ /խողովակներ, ծխնելույզներ, տարաներ և այլն/, ապա նրա մոտ ի հայտ են գալիս իր տարածական պատկերացումները:

Տարածական երևակայությունը մարդու կողմից իրականության տարածական հատկանիշների ընկալումն է, որն ընթանում է նրա տարածական պատկերացումների և հասկացությունների հիման վրա, դրանց վերափոխմամբ ավարտվում է նոր՝ մինչ այդ անհայտ պատկերացման ստեղծմամբ: Երբ սովորողը տրված պրոյեկցիաներով, գծագրով կամ նկարագրով կառուցում է առարկայի աքսոնոմետրիկ պրոյեկցիան, կատարում է տեխնիկական նկարը, պատրաստում է առարկան, ապա նրա մոտ գործում է տարածական երևակայությունը:

Տարածական պատկերացումները տարածական երևակայության հիմքն են:

Որքան հարուստ են մարդու տարածական պատկերացումները, այնքան հեռանկարային է նրա երևակայական գործունեությունը:

Տարածական երևակայության մտավոր ընթացքն ակնառու է գծագրերի, գրաֆիկական պատկերների ընթերցման գործընթացում: Այսպես, տրված պրոյեկցիաներով առարկայի տարածական ձևը պատկերացնելու համար վերլուծվում են տրված պրոյեկցիաները, մտովի պատկերացվում են առարկայի բաղկացուցիչ մասերն իրենց փոխադարձ դասավորությամբ, համախմբվում են այդ պատկերացումները. ստեղծվում է մեկ ամբողջական մտապատկեր առարկայի կառուցվածքի մասին: Մտովի ստեղծված այդ պատկերացումը համեմատվում է տվյալների՝ երեք պրոյեկցիաների հետ, կատարվում է երևակայության արդյունքի մտավոր ստուգում:

Հոգեբաններն ապացուցել են, որ մարդու պատկերացումների և երևակայության զարգացումը պայմանավորված են իրականության հետ անմիջական շփմամբ և ուսումնասիրության ակտիվությամբ: Այստեղից էլ հետևում է ուսուցման գործընթացում զննական պարագաների կարևորությունը պատկերացումների և երևակայության զարգացման գործում:

Բացառիկ կարևոր է զննական պարագաների ուսումնասիրության, դիտման ակտիվությունը: Դիդակտիկ պարագաներն ուսումնասիրելիս սովորողները պետք է տարբերեն դրանց գլխավոր և երկրորդական հատկանիշները:

Տարածական պատկերացումների տեսանկյունից կարևոր են առարկաների ծավալային, կոնստրուկտիվ հատկանիշները:

Տարածական պատկերացումները և երևակայությունը հիմնականում ձևավորվում և զարգանում են գծագրության գործնական պարապմունքների միջոցով:

Գծագրության գործնական աշխատանքները բաժանվում են երկու խմբի՝ գծագրերի, գրաֆիկական պատկերների կատարում և այդ պատկերների ընթերցում:

Գրաֆիկական պատկերների ընթերցումը բացառիկ դեր ունի սովորողի տարածական պատկերացումների և երևակայության ձևավորման ու զարգացման գործում:

Սակայն մեր հանրապետությունում դեռևս չի ձևավորվել գրաֆիկական պատկերների ընթերցման գործնական պարապմունքների համակարգ:

Սույն ձեռնարկում ներկայացվում են մի շարք առաջադրանքներ գրաֆիկական պատկերների ընթերցման վերաբերյալ: Կարծում ենք, որ դրանց կիրառությունը միջին ուսումնական հաստատությունների գծագրության դասընթացում կհանգեցնի դրական արդյունքի:

Գրաֆիկական պատկերների ընթերցման

մեթոդները

Գրաֆիկական պատկերների ընթերցումը սովորողների տարածական պատկերացումների և երևակայության, ստեղծագործական մտածողության, տեսական գիտելիքների դինամիկ աճի, գործնական և աշխատանքային ունակությունների զարգացման լավագույն մեթոդ է:

Ընթերցել գրաֆիկական պատկերը նշանակում է նկարագրել տրված պատկերներին համապատասխան առարկայի կառուցվածքը /կոնստրուկցիան/, բացահայտել առարկան պատրաստելու համար անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական պահանջները:

Աշխատանքային գործընթացում մարդուն առավել անհրաժեշտ են առարկաների, դետալների, կառույցների գծագրերի ընթերցման ունակություններ: Այդ իսկ պատճառով սովորողների գրաֆիկական պատրաստվածության հիմնական խնդիրը համարվում է գծագրերի ընթերցման ուսուցումը:

Գծագրերի ընթերցման մեթոդիկան մեզանում դեռևս մշակված չէ, չկա այդ կարևորագույն գործընթացի տեսական, գործնական համակարգ:

Գծագրության մասնագետներից շատերը տարբեր, նույնիսկ հակադիր, նշանակություն և գործնական կիրառություն են վերագրում գծագրերի ընթերցմանը:

Մենք գտնում ենք, որ գծագրի ընթերցումը մտավոր հատուկ գործընթաց է՝ օժտված միայն իրեն հատուկ առանձնահատկություններով:

Ընթերցել գծագիրը նշանակում է ճշգրիտ նկարագրել գծագրում պատկերված առարկան:

Գծագրի ընթերցման ուսուցման մեթոդները և հնարները էապես տարբերվում են գծագրության ուսուցման մյուս մեթոդներից:

Գծագրի ընթերցման ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ներմուծել լրացուցիչ ակնառու տեսանյութ, առաջադրել սովորողների մտավոր գործունեությունը, ակտիվությունը զարգացնող խնդիրներ: Այդպիսի մեթոդական հնարների համապատասխանում են իրական առարկաների, մոդելների, ակնառու /տարածական/ գրաֆիկական պատկերների կիրառությամբ վարժությունները:

Գրաֆիկական պատկերների ընթերցումը իրականացվում է համեմատության, մոդելավորման և նկարագրության մեթոդներով: Առավել լայն կիրառություն ունի գրաֆիկական պատկերների **համեմատության մեթոդը**:

Մեր կողմից մշակվել են համեմատության մեթոդով կատարվող առավել արդյունավետ առաջադրանքներ (թեստեր), որոնց բովանդակությունը ներկայացվում է ստորև.

- Տարածական տարբեր դիրքերով նույն առարկայի աքսոնոմետրիկ պրոյեկցիայի որոշում (առաջադրանք 1- թեստ 1):

- Առարկայի տրված 1, 2 պրոյեկցիաներով աքսոնոմետրիկ պրոյեկցիայի որոշում (առաջադրանք 2 - թեստ 2, առաջադրանք 6 – թեստ 9) և հակադարձը (առաջադրանք 9 - թեստ 12):

- Տրված գծագրով առարկայի տարբերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաների որոշում (առաջադրանք 8 - թեստ 11, առաջադրանք 18 - թեստ 14, առաջադրանք 19 - թեստ 15):

Իր արդյունավետությամբ աչքի է ընկնում գրաֆիկական պատկերների ընթերցումը մոդելավորման մեթոդով:

Տրված գծագրով առարկան պատրաստելու համար նախ անհրաժեշտ է ընթերցել առարկայի գրաֆիկական պատկերները, մտովի տեսնել առարկայի կոնստրուկցիան:

Ձեռնարկի 65 - 88 էջերի առաջադրանքները կատարվում են մոդելավորման մեթոդով: Մոդելները կարող են պատրաստվել դասի ընթացքում տեխնոլոգիական արհեստանոցներում և տնային պայմաններում:

Մեր կողմից մշակվել է հարթակտրոնային մոդելավորման նոր հնար (էջ 64, 65, առաջադրանքներ 3, 4, նկ. 15 : 18, առաջադրանքներ 11, 12):

Հարթակտրոնային մոդելավորումն առավել արդյունավետ է և աշխատատար չէ: Աշխատատար չեն նաև մետաղալարով և սովարաթղթով մոդելավորման առաջադրանքները: Նշված մեթոդներով կատարվող վարժությունները զգալիորեն զարգացնում են սովորողի տարածական պատկերացումները, երեվակայությունը, գրաֆիկական պատկերների ընթերցման ունակությունները:

Գծագրի ընթերցման առավել արդյունավետությամբ են օժտված «Կոնստրուկտոր» հավաքածուները, որոնց տարրերով հավաքվում են տրված գծագրերին համապատասխան մոդելներ:

Գոյություն ունեն բազմապիսի «Կոնստրուկտոր» հավաքածուներ, որոնց կիրառությունը ուսուցման գործընթացում խրախուսելի է:

Մենք մշակել ենք «Կոնստրուկտոր» հավաքածուներ, որոնք գոյություն ունեցող կոնստրուկտորներից տարբերվում են իրենց կառուցվածքով:

«Կոնստրուկտոր խորանարդ» /էջ 71/, «Կոնստրուկտոր պրիզմա», «Կոնստրուկտոր գլան» /էջ 73,75/, որոնք պատրաստվում են նույն օրինաչափությամբ: Երկրաչափական մարմինը բաժանվում է երկու հավասար մասերի, որոնցից մեկը բաժանվում մի քանի մասերի: Բաժանումից առաջանում են երկրաչափական մարմնի պարզագույն հատույթներով մասնիկներ:

Կոնստրուկտորի տարրերով հավաքվում է տրված գծագրին համապատասխան մոդելը:

Առարկան պատրաստելու համար նախ մշակվում են անհրաժեշտ գրաֆիկական պատկերներ: Յուրաքանչյուր առարկա, դետալ, մեխանիզմ, մեքենա, շինություն և կառույց պատրաստվում է իր նախագծով: Կարևոր դեր ունի առարկայի աշխատանքային գծագիրը, որը ոչ միայն արտահայտում է առարկայի կառուցվածքը (կոնստրուկցիան), այլև պարունակում է պատրաստման համար անհրաժեշտ բոլոր տվյալները և պայմանները:

Ձեռնարկում բերված կոնստրուկտորները նպատակահարմար է պատրաստել տեխնոլոգիայի դասերին:

Կոնստրուկտորներով, առավել կարճ ժամանակահատվածում, իրականացվում է գծագրի ընթերցումը:

Ընդարձակ են գծագրության միջառարկայական կապերը: Հատկապես առանձնահատուկ են «Գծագրություն» - «Երկրաչափություն», «Գծագրություն»-«Տեխնոլոգիա» փոխադարձ կապերը «Գծագրություն» - «Երկրաչափություն» դասընթացների փոխադարձ կապերի կիրառությունն ապահովում է գծագրության հիմնադրույթների գիտատեսական հիմնավորումը: Այդ նպատակով ձեռնարկում ընդգրկված են պարզագույն երկրաչափական մարմինների (բազմանիստեր և պտտման մարմիններ) գրաֆիկական պատկերների կառուցման օրինակներ: Մշակված են առաջադրանքներ՝ բազմանիստի մակերևույթին պատկանող կետերի, հատվածների (կողեր), հարթ պատկերների (նիստեր), պտտման մակերևույթներին պատկանող կետերի պրոյեկցիաների վերաբերյալ (էջ 22-26, թեստեր 5,6,7, 8):

Գրաֆիկական պատկերների ընթերցման նկարագրության մեթոդը հենված է հարթաչափության և տարածաչափության հիմնական հասկացությունների, սահմանումների, թեորեմաների հիմնադրույթների վրա:

Նկատի ունենալով գծագրության և երկրաչափության փոխադարձ կապերը՝ ձեռնարկում բերված են վարժություններ երկրաչափական կառուցումներից (էջ 132 -142): Ուսումնասիրելով տրված պատկերները՝ ընթերցողը նկարագրում է դրանց կառուցումները գծագրական գործիքներով:

Ձեռնարկի հավելվածում առաջարկվում է գրաֆիկական պատկերների կատարում, տրված են թվով 6 գրաֆիկական աշխատանքներ և մեկ ստուգողական գրաֆիկական աշխատանք:

Ընդհանրացնելով նշենք, որ գրաֆիկական պատկերների ընթերցման ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մշակել վարժությունների համակարգ, որը պետք է նպատակաուղղվի գրաֆիկական պատկերների ընթերցմամբ սովորողների մտավոր գործունեության ձևավորմանը և զարգացմանը:

Ուսուցման վերջնական շրջանում, սովորողներն ընդհանրացնելով գրաֆիկական պատկերների ընթերցման իրենց գիտելիքները, եզրահանգում են, որ առանց գրաֆիկական պատկերների, հատկապես գծագրերի ընթերցման ունակությունների, անհնար է հասկանալ, թե ինչ է պատկերված, ինչ տվյալներ են անհրաժեշտ դետալի /առարկայի/ պատրաստման գործընթացի և դրա վերահսկողության համար:

**ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՈՎ**

Ա Ռ Ա Ջ Ա Դ Ր Ա Ն Ք 1 (ԹԵՍՏ 1)

Նյութը: Պարզագույն երկրաչափական մարմինների գրաֆիկական պատկերների ընթերցում:

Բովանդակությունը: Քարտ 1.1-ում տրված են երկրաչափական մարմինների գրաֆիկական պատկերներ, որոնք նշանակված են գլխատառերով (Ա, Բ, Գ...) և թվանշաններով (1, 2, 3 ...):

Պահանջվում է.

- Ուսումնասիրել առաջադրված գրաֆիկական պատկերները, նկարագրել յուրաքանչյուր պատկերին համապատասխան առարկայի երկրաչափական կառուցվածքը և տարածական դիրքը (հիմքերի դիրքը V, H, W հարթությունների նկատմամբ):

- Թվանշաններով նշանակված պատկերների շարքում գտնել գլխատառով նշանակված համապատասխան պատկերը:

Համապատասխան պատկերները միմյանցից տարբերվում են իրենց չափերով և տարածական դիրքով:

Օրինակ. տարբերակ 2-ում (Ա) - ն քառակուսաձև անցքով կանոնավոր քառանկյուն պրիզմայի գարաֆիկական պատկեր է, որի համապատասխանը (15)-ն է: (Ա) պատկերում պրիզման ուղղաձիգ դիրք ունի (հիմքը պատկանում է կամ զուգահեռ է H հարթությանը), (15) - պատկերում պրիզմայի կողերն ուղղահայաց են V հարթությանը (հիմքը պատկանում է կամ զուգահեռ է V հարթությանը): Համապատասխան պատկերները, բացի իրենց տարածական դիրքից, տարբերվում են նաև իրենց չափերով:


Պատասխանների աղյուսակ

Տարբերակ 1

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է
5, 15						


Տարբերակ 1

ԵՐԿՐՈՇԱԾԱԿԱՆ ՊՈՐՇԱԳՈՐԾՆ ՄԱՐԽՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՅՈՒՐՔ



Տարբերակ 2

ԵՐԿՐՈՇԱԾԱԿԱՆ ՊՈՐՇԱԳՈՐԾՆ ՄԱՐԽՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՅՈՒՐՔ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2 (ԹԵՍՏ 2)

Նյութը: Պարզագույն երկրաչափական մարմինների գրաֆիկական պատկերների ընթերցում:

Բովանդակությունը: Տրված են դետալների ուղղանկյուն պրոյեկցիաներ (Ս, Բ, Գ...) և աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ (1, 2, 3...):

Պահանջվում է.

- Ուսումնասիրել տրված գրաֆիկական պատկերները:

- Ս, Բ, Գ... պրոյեկցիաներով նկարագրել պատկերված դետալի երկրաչափական կառուցվածքը, 1, 2, 3... շարքում գտնել համապատասխան աքսոնոմետրիկ պրոյեկցիան:

Երկու շարքերում դետալների տարածական դիրքերը և չափերը տարբեր են:


Տարբերակ 1-ի (Ա) օրինակում դետալը բաղկացած է գլանից և հատած կոնից: Դետալի առանցքն ուղղահայաց է W հարթությանը: Այդ դետալին իր երկրաչափական կազմվածքով համապատասխանում է (6)-ում պատկերված դետալը: (Բ)-ին համապատասխանում է (15)-ը:

Պատասխանների աղյուսակ


Տարբերակ 1

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
6	15				

Surfetyň 1



Surfetyň 2



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3 (ԹԵՍՏ 3)

Նյութը: Պարզագույն երկրաչափական մարմինների համախումբ:

Բովանդակությունը: Տրված են պարզագույն երկրաչափական մարմինների իզոմետրիկ պրոյեկցիաներ (1, 2, 3...) և դրանցից բաղկացած մոդելների պրոյեկցիաներ (գլխավոր տեսքեր – Ա, Բ, Գ...):

Պահանջվում է.


Ուսումնասիրել տրված գրաֆիկական պատկերները, անվանել Ա, Բ, Գ... համախմբերում ընդգրկված երկրաչափական մարմինները:

Որոշել յուրաքանչյուր առարկայի բաղկացուցիչ մասերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները:

Օրինակ. Տարբերակ 1-ում «Ա» դետալը բաղկացած է (11) կոնից, (5) գլանից, (3) պրիզմայից, (8) գլանից: Նշված բոլոր տարրերը տեղադրված են համաչափության նույն առանցքի նկատմամբ:


Տրված աքսոնոմետրիկ պրոյեկցիաներով կարելի է ստանալ հարթակտրոնային կոնստրուկտոր: Աքսոնոմետրիկ պրոյեկցիաները կտրվում են պահպանելով իրենց եզրագծերը: Ստացվում են տարբեր չափերի, տարբեր դիրքերով երկրաչափական մարմինների իզոմետրիկ աքսոնոմետրիկ պրոյեկցիաների հարթակտրոններ, որոնցով մոդելավորվում է դետալների իզոմետրիկ պրոյեկցիաներ:

Հարթակտրոնների տեղադրման օրինակներ



Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	Ի	Լ



Տարբերակ 1



Ա

Բ




Գ



Դ

Ե




Զ



Է

Ը




Թ



Ճ



Ի

Լ





Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	Ի	Լ

Տարբերակ 2



Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ

Տարբերակ 3



Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ

ԱՌԱՋԱՂԴԱՆՔ 4 (ԹԵՍՏ 4)

Նյութը: Ուղղանկյունանիստերի գրաֆիկական պատկերներ:

Բովանդակությունը: Տրված են տարբեր չափերով և տարածական տարբեր դիրքերով ուղղանկյունանիստերի շեղանկյուն դիմետրիկ աքսոնոմետրիաներ (1, 2, 3...) և այդ ուղղանկյունանիստերից կազմված առարկաների պրոյեկցիաներ (Ա, Բ, Գ):

Պահանջվում է .

Գտնել Ա, Բ, Գ առարկաների բաղկացուցիչ տարրերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները:

Ի տարբերություն նախորդ առաջադրանքի այստեղ տարրերի տարածական դիրքը փոխել չի թույլատրվում: Յուրաքանչյուր ուղղանկյունանիստ առարկայի կազմության մեջ մտնում է տվյալներում պատկերված դիրքով: Առարկայի կազմում տարրերը տեղադրելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

- Եթե ուղղանկյունանիստերի նիստերը հպման տեղում գտնվում են նույն հարթության մեջ, ապա նրանց կողերն այդ սահմանում վերանում են:

Օրինակ: Տարբերակ 1-ում տրված են (Ա) առարկայի ֆրոնտալային և հորիզոնական պրոյեկցիաները: Ուսումնասիրությունից երևում է, որ այն բաղկացած է (6) ուղղանկյունանիստից, (1) խորանարդից, (4), (4), ուղղանկյունանիստերից (Գ) -ում պատկերված առարկան բաղկացած է 6, 8, 11, 11, 4, 4 տարրերից:


Պատասխանների աղյուսակ

Տարբերակ 1


Ա	Բ	Գ
6,1,4,4	6,2,5,5	6,8,11,11,4,4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4


Տարբերակ 1




Տարբերակ 2



Տաքերակ 3




Տարբերակ 4



ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ


ՊՐԻՉՄԱ

Ուսումնասիրել և նկարագրել պրիզմայի մակերևույթին պատկանող կետերի կառուցումը պրոյեկցիաներում և մակերևույթի փոկածքում:




ԲՈՒՐԳ

Ուսումնասիրել և նկարագրել բուրգի մակերևույթին պատկանող կետերի կառուցումը պրոյեկցիաներում և մակերևույթի փովածքում:



ԳԼԱՆ


Ուսումնասիրել և նկարագրել գլանի մակերևույթին պատկանող կետերի կառուցումը պրոյեկցիաներում և մակերևույթի փոխադրում:



Ու.4

ԿՈՆ


Ուսումնասիրել և նկարագրել կոնի մակերևույթին պատկանող կետերի կառուցումը պրոյեկցիաներում և փոխաձրում:



64.5

ԳՈՒՆԴ

Ուսումնասիրել և նկարագրել գնդի մակերևույթին պատկանող կետերի պրոյեկցիաների կառուցումը:



Նկ. 6


ԹԵՍՏ 5

Տրված պրոյեկցիաներով որոշել կետի դիրքը պրիզմայի մակերևույթի նկատմամբ:

Պայմանական նշանակումներ


Կետը գտնվում է պրիզմայի կողի վրա	1
Կետը գտնվում է պրիզմայի նիստի վրա	2
Կետը գտնվում է պրիզմայի հիմքի վրա	3

- նկ. 7.1 $A(a';a) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $B(b';b) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $C(c';c) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $D(d';d) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $E(e';e) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $K(k';k) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
- նկ. 7.2 $A(a';a) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $B(b';b) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $C(c';c) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $D(d';d) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $\Xi(\xi';\xi) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $T(t';t) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $N(n';n) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $F(f';f) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
- նկ. 7.3 $A(a';a) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $B(b';b) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $C(c';c) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $D(d';d) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $E(e';e) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $K(k';k) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $F(f';f) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $M(m';m) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $N(n';n) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $R(r';r) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$



- նկ. 8.1 $A(a';a) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $B(b';b) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $C(c';c) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $D(d';d) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $E(e';e) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $K(k';k) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $M(m';m) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $F(f';f) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $T(t';t) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$

uly. 8.2 $A(a';a) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $B(b';b) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $C(c';c) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $D(d';d) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $E(e';e) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$ $K(k';k) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$
 $N(n';n) \rightarrow 1\ 2\ 3\ 4;$




ԹԵՄԱ 6

Տրված պրոյեկցիաներով որոշել կետի դիրքը բուրգի մակերևույթի նկատմամբ:

Կետը գտնվում է բուրգի՝


- | | |
|---------------------------------------|---|
| կողի վրա | 1 |
| նիստի վրա | 2 |
| հիմքի վրա | 3 |
| Կետը չի պատկանում բուրգի մակերևույթին | 4 |

Խկ. 9.1 $A(a';a)$ —1 2 3 4; $B(b';b)$ —1 2 3 4; $C(c';c)$ —1 2 3 4;
 $D(d';d)$ —1 2 3 4; $E(e';e)$ —1 2 3 4; $K(k';k)$ —1 2 3 4;



Խկ. 9.2 - $M(m';m)$ —1 2 3 4; $B(b';b)$ —1 2 3 4; $C(c';c)$ —1 2 3 4;
 $D(d';d)$ —1 2 3 4; $E(e';e)$ —1 2 3 4; $K(k';k)$ —1 2 3 4;
 $M(m';m)$ —1 2 3 4;
Խկ. 9.3 $A(a';a)$ —1 2 3 4; $B(b';b)$ —1 2 3 4; $D(d';d)$ —1 2 3 4;
 $E(e';e)$ —1 2 3 4; $K(k';k)$ —1 2 3 4;

- 10.1 A(a';a) —1 2 3 4; B(b';b) —1 2 3 4; C(c';c) —1 2 3 4;
 D(d';d) —1 2 3 4; E(e';e) —1 2 3 4; K(k';k) —1 2 3 4;
 M(m';m) —1 2 3 4; N(n';n) —1 2 3 4;
 10.2 -A(a';a) —1 2 3 4; B(b';b) —1 2 3 4; C(c';c) —1 2 3 4;
 D(d';d) —1 2 3 4; E(e';e) —1 2 3 4; M(m';m) —1 2 3 4;



Гл.10

ԹԵՍՏ 7

- Տրված պրոյեկցիաներով որոշել կետի դիրքը զլանի մակերևույթի նկատմամբ

Պայմանական նշանակումներ

Կետը գտնվում է զլանի կողմնային մակերևույթի վրա	1
Կետը գտնվում է զլանի հիմքի վրա	2
Կետը չի գտնվում զլանի մակերևույթի վրա	3

նկ. 11.1 $A(a';a) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $B(b';b) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $C(c';c) \rightarrow 1 \ 2 \ 3;$
 $D(d';d) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $E(e';e) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $K(k';k) \rightarrow 1 \ 2 \ 3;$
 $M(m';m) \rightarrow 1 \ 2 \ 3;$

- Տրված պրոյեկցիաներով որոշել կետի դիրքը կոնի մակերևույթի նկատմամբ

Պայմանական նշանակումներ

Կետը գտնվում է կոնի կողմնային մակերևույթի վրա	1
Կետը գտնվում է կոնի հիմքի վրա	2
Կետը չի գտնվում կոնի մակերևույթի վրա	3


նկ. 11.2 $A(a';a) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $B(b';b) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $C(c';c) \rightarrow 1 \ 2 \ 3;$
 $D(d';d) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $E(e';e) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $K(k';k) \rightarrow 1 \ 2 \ 3;$
 $M(m';m) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $N(n';n) \rightarrow 1 \ 2 \ 3;$ $F(f';f) \rightarrow 1 \ 2 \ 3;$

- Տրված պրոյեկցիաներով որոշել կետի պատկանելիությունը գնդի մակերևույթին (նկ. 11,3):

Պայմանական նշանակումներ

Կետը պատկանում է գնդի մակերևույթին	1
Կետը չի պատկանում գնդի մակերևույթին	2

նկ. 11.3 $A(a';a) \rightarrow 1 \ 2;$ $B(b';b) \rightarrow 1 \ 2;$ $C(c';c) \rightarrow 1 \ 2;$
 $D(d';d) \rightarrow 1 \ 2;$ $E(e';e) \rightarrow 1 \ 2;$ $K(k';k) \rightarrow 1 \ 2;$
 $M(m';m) \rightarrow 1 \ 2;$ $N(n';n) \rightarrow 1 \ 2;$ $F(f';f) \rightarrow 1 \ 2;$
 $T(t';t) \rightarrow 1 \ 2;$



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5 (ԹԵՍՏ 8)

Բովանդակությունը

Մոդելի մակերևույթին պատկանող կետերի որոշումը տրված երեք պրոյեկցիաներով և աքսոնոմետրիկ պրոյեկցիայով:

Մոդելի աքսոնոմետրիկ պրոյեկցիայում գլխատառերով նշված են մակերևույթին պատկանող տարրեր (Ա, Բ, Գ, ...):

Մոդելի երեք պրոյեկցիաներում սլաքներով ցուցադրված և համարակալված են Ա, Բ, Գ, ... տարրերի պրոյեկցիաները:


Պահանջվում է գտնել Ա, Բ, Գ, ... տարրերի երեք պրոյեկցիաները:

Պատասխանները լրացնել աղյուսակում:

Օրինակ. նկ. 12-ում (Ա) կողի ֆրոնտալային պրոյեկցիան 6-ն է, հորիզոնական պրոյեկցիան 4-ն է, պրոֆիլային պրոյեկցիան 17-ն է:




Պատասխանների աղյուսակ

Տարրեր	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Ի	Լ
Պր. - ներ								
Ֆրոնտալային	5							
Հորիզոնական	4							
Պրոֆիլային	17							






Տարբերակ 1

ԲԱԶՄԱՆԻՍՏԻՆ ՊԱՏՎԱՆՈՂ ԿԵՏԻ, ՀԱՏՎԱԾԻ ՀԱՌԹ
ՊԱՏՎԵՐԻ ՊՐՈՑԵԿՑԻԱՆԵՐ






Տարբերակ 2

ԲԱԶՄԱՆԻՍՏԻՆ ՊԱՏՎԱՆՈՂ ԿԵՏԻ, ՀԱՏՎԱԾԻ ՀԱՌԹ
ՊԱՏՎԵՐԻ ՊՐՈՑԵԿՑԻԱՆԵՐ






Տարբերակ 3

ԲԱԶՄԱՒԱՅՐՈՒ ՊԱՏՎԱԼՈՒ ԿԵՏԻ, ՀԱՏԱՎՈՐ, ՀԱՐՈՑ
ՊԱՏՎԵՐԻ ՊԵՐՅԱՑԻՄԵՆ




Տարբերակ 4

ԲԱԶՄԱՒԱՅՐՈՒ ՊԱՏՎԱԼՈՒ ԿԵՏԻ, ՀԱՏԱՎՈՐ, ՀԱՐՈՑ
ՊԱՏՎԵՐԻ ՊԵՐՅԱՑԻՄԵՆ




Տարբերակ 5

ԲԱԶՄԱՆԻԱՏՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԵՏԻ, ՀԱՏՎԱԾԻ, ՀԱՐԹ
ՊԱՏԿԵՐԻ ՊՐՈՅԵԿՏԻԱՆԵՐ





Տարբերակ 6

ԲԱԶՄԱՆԻԱՏՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԵՏԻ, ՀԱՏՎԱԾԻ, ՀԱՐԹ
ՊԱՏԿԵՐԻ ՊՐՈՅԵԿՏԻԱՆԵՐ





Տարբերակ 7

ՔԱՇԱՄԱՆԱՍՏԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԵՏԻ, ՀԱՏՎԱԾԻ, ՀԱՐԹ
ՊԱՏԿԵՐԻ ՊՐՈՅԵԿՏԱՑՈՒՄԵՐ



Տարբերակ 8

ՔԱՇԱՄԱՆԱՍՏԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԵՏԻ, ՀԱՏՎԱԾԻ, ՀԱՐԹ
ՊԱՏԿԵՐԻ ՊՐՈՅԵԿՏԱՑՈՒՄԵՐ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6 (ԹԵՍՏ 9)

Նյութը: Խորանարդի երեք պրոյեկցիաները և շեղանկյուն դիմետրիկ պրոյեկցիան: Նիստերի անկյունագծերի հատկությունները:

Բովանդակությունը: Տրված են 6 խորանարդների շեղանկյուն դիմետրիկ պրոյեկցիաներ, տարված են տեսանելի նիստերի անկյունագծերը, նրբագծված են անկյունագծերով առաջացած մեկ կամ երկու եռանկյունիներ, պատկերված են խորանարդներից մեկի երեք պրոյեկցիաները:

Պահանջվում է

- Օգտվելով աքսոնոմետրիկ պրոյեկցիայում և ուղղանկյուն պրոյեկցիաներում կատարված նրբագծումներից՝ 1–6 շարքում գտնել տրված պրոյեկցիաներին համապատասխան աքսոնոմետրիկ պրոյեկցիան: Խնդիրը լուծելու համար ուսումնասիրվում են խորանարդի պրոյեկցիաներն առանձին-առանձին:

Օրինակ. Տարբերակ 6-ի ֆրոնտալային պրոյեկցիայում անկյունագծերի փոխհատումից առաջացած չորս եռանկյուններից նրբագծված են ձախ և աջ եռանկյունները: Այդպիսի նրբագծում պարունակում են 2, 5, 6 խորանարդները:

Հորիզոնական պրոյեկցիայից երևում է, որ նրբագծված է աջ կողմի եռանկյունը: 2, 5, 6 խորանարդներից այդպիսի նրբագծում պարունակում են 2 և 6 խորանարդները (բացառվում է 5 խորանարդը): Պրոֆիլային պրոյեկցիայում նրբագծված է ձախակողմյան եռանկյունը: 2 և 6 խորանարդներից այդպիսի նրբագծում ունի 6-ը:





Որոնելի խորանարդը 6-ն է:

Այս պարզագույն օրինակը ցույց է տալիս, որ առարկայի կառուցվածքը ճշգրիտ պատկերացնելու համար անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել երեք պրոյեկցիաներն իրենց փոխադարձ կապերով:



Պատասխանների աղյուսակ

Տարբերակները	1	2	3	4	5	6	7	8	9
Խորանարդը						6			


Տարբերակ 1





Տարբերակ 2




Տարբերակ 3




Տարբերակ 4









Տարբերակ 5







Տարբերակ 6








Տարբերակ 7



Տարբերակ 8



Տարբերակ 9



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7 (ԹԵՍՏ 10)

Նյութը: Երկրաչափական մարմինների համախմբի երեք պրոյեկցիաները:

Բովանդակությունը: Տրված են երեք երկրաչափական մարմինների համախմբի ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաները պրոյեկցիոն կապի մեջ: Հորիզոնական պրոյեկցիան պատկերված է հորիզոնական պրոյեկցիաների շարքում (1-4):

Պահանջվում է.

1, 2, 3, 4 շարքում գտնել տրված համախմբի հորիզոնական պրոյեկցիան: Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել համախմբի ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաները, բացահայտել պրոյեկցիոն կապը դրանց միջև՝ ըստ առանձին առարկաների:

Յուրաքանչյուր երկրաչափական մարմնի ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաներով պատկերացնել հորիզոնական պրոյեկցիան, հորիզոնական պրոյեկցիաների շարքում գտնել այդ պատկերը:


Օրինակ: Տարբերակ 1-ի համախմբի ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաներից երևում է, որ համախմբի ձախ կողմում տեղադրված մարմինը կանոնավոր քառանկյուն բուրգ է (ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաները հավասար պատկերներ են):

Բուրգի աջ կողմում տեղադրված մարմնի ֆրոնտալային պրոյեկցիան շրջանագիծ է, որը կարող է լինել զլանի, կոնի, գնդի պրոյեկցիա: Այդ մարմնի պրոֆիլային պրոյեկցիան նույնպես շրջանագիծ է, հետևաբար այդ մարմինը գունդ է, որի հորիզոնական պրոյեկցիան շրջանագիծ է:



Երրորդ մարմինը գտնվում է գնդի ետևում, որի ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաները միմյանց հավասար ուղղանկյուններ են: Այդպիսի պրոյեկցիաներով մարմինը կարող է լինել պրիզմա կամ զլան, տրված համախմբում այդ մարմինը կանոնավոր քառանկյուն պրիզմա է, որի հորիզոնական պրոյեկցիան քառակուսի է:

Այդ ուսումնասիրություններն ամփոփելով՝ դժվար չէ նկատել, որ տրված համախմբի հորիզոնական պրոյեկցիան (1)-ն է:



Գրաֆիկական պատկերների ընթերցումով խնդիրը լուծելուց հետո կարելի է կատարել գրաֆիկական աշխատանք, պրոյեկցիոն կապի մեջ գծել տրված համախմբի երեք պրոյեկցիաները:




Տարբերակ 1





Տարբերակ 2





Տարբերակ 3





Տարբերակ 4





Տարբերակ 5





Տարբերակ 6





Տարբերակ 7



Տարբերակ 8



Տարբերակ 9



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8 (ԹԵՍՏ 11)

Նյութը: Պարզ դետալների գծագրերի ընթերցում:

Բովանդակությունը: Տրված են դետալի պրոյեկցիաները և դետալների մի շարք մասնիկների աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ (1, 2, 3):

Պահանջվում է.

Ուսումնասիրել տրված պրոյեկցիաները, պատկերացնել դետալի կառուցվածքը (կոնստրուկցիան), բաղկացուցիչ մասերի երկրաչափական ձևը:

1, 2, 3... 14 շարքում գտնել դետալի տարրերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները:




Օրինակ: Տարբերակ 1 Ա-ում տրված են դետալի ֆրոնտալային և պրոֆիլային պրոյեկցիաները:





Դետալը բաղկացած է գլանաձև անցքով երկու տարբեր չափերով գլաններից, որոնց աքսոնոմետրիկ պրոյեկցիաները 7 և 11 պատկերներն են:






Տարբերակ 1 Դ-ում դետալը պատկերված է երեք պրոյեկցիաներով, որոնց ուսումնասիրությունից երևում է, որ այն բաղկացած է երեք տարրերից: Դետալի հիմքը երկու գլանաձև անցքերով, ձախ և աջ մասում կիսագլանաձև մասերով ուղղանկյունանիստ է:





Հիմքի վրա՝ մեջտեղում, հետևի մասում կա ուղղանկյունանիստաձև տարր, որին կցված է կիսագլանաձև մասով, գլանաձև անցքով տարր:





Պրոյեկցիաների ուսումնասիրությունից երևում է, որ դետալի հիմքի աքսոնոմետրիան (14) պատկերն է, որի վրա գտնվող տարրերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները 10-ը և 12-ն են:





Տարբերակ 1			
Ա 	Բ 	ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԵԲԵՐ              	
Գ 	Դ 	Կ 	Լ 





Տարբերակ 2			
Ա  Լիներիկ	Բ  Լիներիկ	ԴԵՏԱԽԻ ՏԱՐԵԵՐԸ 	
Գ  Լիներիկ	Դ  Հարվածիկ		


Տարբերակ 3			
ա  տեսքից	բ  կողմից	ՆԵՏԱԿ ՏԱՐԲԵՐԱԿ 	
գ  տեսքից	դ  կողմից		

Տարբերակ 4			
u  կցում	p  վիճելի	ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ 	
q  առանցքային	r  հեմարան		

Տարբերակ 5			
ՆԵՏՈՒԻ ՏԱՐԱԾԵՐ			
	Բ	Լայնած	
	Ա	Բարդեմ	
		Լայնած	

Տարբերակ 6			
Ու 	Բ 	ՆԵՐՏԱՆԿԱՆ ՎԻՃԵԿՆԵՐ 	
		Երկնային 	Կիցնային 

Տարբերակ 7			
ա 		բ 	
գ 		դ 	
ԴԵՏԱԼՆԵ ՏԱՐԲԵՐԸ 			



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9 (ԹԵՍՏ 12)

Նյութը: Առարկաների հիմնական գրաֆիկական պատկերները՝ երեք պրոյեկցիաները և աքսոնոմետրիկ պրոյեկցիան:

Բովանդակությունը: Տրված են առարկայի աքսոնոմետրիկ պրոյեկցիան (Ա, Բ ...) և երեք պրոյեկցիաները: Առաջին շարքում տրված են ֆրոնտալային պրոյեկցիաները (տեսքերը դիմացից – 1, 2...), երկրորդ շարքում պրոֆիլային պրոյեկցիաները 7, 8, 9,..., երրորդում՝ հորիզոնական պրոյեկցիաները (տեսքերը վերևից – 13, 14,...):

Պահանջվում է.

Ուսումնասիրել առարկայի աքսոնոմետրիկ պրոյեկցիան, անվանել առարկայի նախապատրաստվածքը:

Պրոյեկցիաների 1-ին շարքում գտնել առարկայի ֆրոնտալային պրոյեկցիան (տեսքը դիմացից), 2-րդ շարքում՝ պրոֆիլային պրոյեկցիան (տեսքը ձախից), 3-րդ շարքում՝ հորիզոնական պրոյեկցիան (տեսքը վերևից):


Ընթերցումից հետո կարելի է կատարել գրաֆիկական աշխատանք. պրոյեկցիոն կապի մեջ գծել առարկայի երեք պրոյեկցիաները (նկ. 13):


Պատասխանների աղյուսակ


Տարբերակ 1

առարկան	ֆրոնտ.պր.	պրոֆ. պր.	հորիզ. պր.
Ա	4	10	16
Բ			
Գ			
Դ			
Ե			
Զ			

Գրաֆիկական կատարման օրինակ







ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10 (ԹԵՍՏ 13)

Նյութը: Հանույթներով բազմանիստերի գրաֆիկական պատկերների ընթերցում:

Բովանդակությունը: Տրված են մոդելների ուղղանկյուն պրոյեկցիաները ($U, F, \dots$) աքսոնոմետրիկ պրոյեկցիաները ($u, f, \dots$) և տվյալներում բացակայող պրոյեկցիաները ($1, 2, \dots$):

Պահանջվում է.

Ռեսուլտատները տրված պրոյեկցիաները, նկարագրել հանույթները:


Աքսոնոմետրիկ պրոյեկցիաների շարքում գտնել առարկայի տրված պրոյեկցիաներին համապատասխանող մոդելը:

Տվյալներում բացակայող պրոյեկցիաների շարքում գտնել մոդելի պրոյեկցիան:

Օրինակ՝ նկ. 14-ում մոդելի նախապատրաստվածքը խորանարդ է, որի հանույթները կատարվում են հետևյալ հաջորդականությամբ:

Հեռացվում է խորանարդի վերնի ձախակողմյան $1/4$ մասը (նկ. 14,1): Ձախ կողմում պահպանված $1/4$ -ից հեռացվում են միմյանց հավասար և համաչափ դիրքի երկու եռանկյուն պրիզմաներ (նկ. 14, 2):

Վերնի աջակողմյան $1/4$ -ի մեջտեղում կատարվում է եռանկյուն պրիզմայաձև հանույթ (նկ. 14, 3): Ստացված մոդելը տարբերակ 1-ում համապատասխանում է (U) պրոյեկցիաներին, բացակայող (հորիզոնական) պրոյեկցիան (2)-ն է:



Նկ.14






Պատասխանների աղյուսակ

Տարբերակ 1


Տրված պր.	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
Աքսոն. պր.-ն	4					
3-րդ պր.ն	2					

Տարբերակ 1


Կառուցելու համար տրված է հետևյալ պայմանագրերը:





Կառուցելու համար տրված է հետևյալ պայմանագրերը:




Տարբերակ 2		ԱՔՍՈՆՈՍԵՏՐԻԿ ՊՐՈՅԵԿՏԻՄԵՐ	
ՀԱՆՈՅԹՈՎ ՊՐԻՋՄԱՅԻ ՊՐՈՅԵԿՏԻՄԵՐ		ԱՔՍՈՆՈՍԵՏՐԻԿ ՊՐՈՅԵԿՏԻՄԵՐ	
ա		ա	
բ		բ	
գ		գ	
դ		դ	
ե		ե	
զ		զ	
է		է	
8		8	
9		9	
10		10	
11		11	
12		12	
13		13	
14		14	
15		15	
16		16	
17		17	
18		18	
19		19	
20		20	
21		21	
22		22	
23		23	
24		24	
25		25	
26		26	
27		27	
28		28	
29		29	
30		30	
31		31	
32		32	
33		33	
34		34	
35		35	
36		36	
37		37	
38		38	
39		39	
40		40	
41		41	
42		42	
43		43	
44		44	
45		45	
46		46	
47		47	
48		48	
49		49	
50		50	








Տարբերակ 6





**ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ
ՄԵԹՈԴՈՎ**

Աքսոնոմետրիկ պրոյեկցիաների հարթակտրոնային մոդելավորում

